

աղայնց կարնեցւոց, առ որում գտաւ ի հոգե-
վարս Հ. Պօղոս հին բարեկամ նորա: Աղքատ
եւ անինչ մեռաւ այրն փառաւոր եւ զովքնի ամե-
նայնիւ, եւ այն չեւ հասեալ ի ծերութիւն, որոյ
հայրն եւ հօրեղբայրն զհարիւրամենիւք անցեալ
էին ի վախճանելն, մեզ եթող զմեծագին կար-
ծեցեալ թագ իւր, որ էր ընդելլուզեալ սուտ
ակամբք եւ սուտ մարգարտօք: Ի վաղիւ
անդր ի դեկտ. 23 ըստ փափաքանաց իւրոց,
որ ի մանկութեան տենչացեալ էր գալ ի
համբոյր տապանի հիմնադրին մերոյ Մխի-
թարայ Աբբայի, թաղեցաւ մօտ առ նմա յե-
կեղեցւոջ մերում, ի մէջ դասու ըստ հա-
րաւակողմն, յորոյ վերայ եղաւ տապանագիր՝
յօրինեալ ի ծերունի Հ. Վրթանիսէ մերմէ
(համառօտ, զի սակաւ լիցին ծախք քանդակ-
ման), օրինակ զայս.

ՐԱԲՈՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔԵԱՆ

ՀԸՆՁԵՑԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԻՓԼԻՉ

ՔԱՂԱՔԻ

ԹՈՂԵԱԼ ԶԱՄԵՆԱՅՆ Ի ՀՌՕՄ

ՊԱՆԴԻՏԻ

ԱՆՏԻ Ի ՎԷՆԷՏ. ՈՐ ԵՒ ԱՍՏ

ՀԱՆԳՉԻ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1790. ԴԵԿՏ. 22